

«ԳԵՏԱՐԳԵԼ ՍՈՒՐԲ ՆԵՆՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՊԱՐԱԿԱՆՈՆԸ

Ա. Մ. ՄԽԻԹՐԱՆՆ

Նախապատմական շրջանից Օիրակը հայ մշակույթի կարևորագույն օր-
րաններից է՝, և այդ հիմքի վրա է բարձրանում Անիի միջնադարյան շրջանի
մտավոր առաջընթացը՝ 9-11-րդ դարերի գրականության և արվեստի թռիչքային
զարգացումը¹: Այդ ժամանակներից պահպանվում է մի բանահյուսական հու-
շարձան, որ հայտնի է «Գետարգել Սուրբ Նշանի պատմություն» վերնագրով²:
Այդ պարականոնը ուշագրավ է կրոնաքաղաքական, պատմական և գեղարվես-
տական առումներով: Այս ստեղծագործության և գործողություններով նրա հետ
առնչվող «Կոզեռնի տեսիլք»-ի՝ մասին առաջին անգամ հիշատակում է Մ. Ուո-
հայեցին՝ փաստորեն դառնալով դրանց առաջին գրի առնողը: Իսկ երկու ստեղ-
ծագործությունների առնչակցության, միջավայրի և գործողությունների, դրանց
կարևորության մասին գրում է Ն. Մառը³: Քննությունը ցույց է տալիս, որ այս կա-
պից գատ «Պատմությունը» հաղորդակցվում է տարբեր ժամանակներում ստեղծ-
ված այլ երկերի հետ, որոնք կազմում են մեկ սյուժետային ընդհանրություն: Այն
ունի երկու տարբերակ: Համառոտը շրջանառվում է Մ. Ուոհայեցու կողմից, ուր
չկան խաչափայտի երկու Գյուտերը, իսկ ընդարձակն սկսվում է դրանցով և քիչ
ավելի ուշ շրջանի է⁴:

Ըստ ավանդության՝ խաչափայտի մասունքները Հեղինեն՝ փոխանցում է իր
որդի Կոստանդիանոսին (306-337), իսկ վերջինս՝ Հոռոմի առաջին հայրապետ
Սեդրեստրոսին (314-335): Այդ մասին իմանալով՝ Հոռոմ են գնում Գրիգոր Լուսա-
վորիչը (302-325) և Տրդատ արքան (298-331): Կնքվում է դաշինք երկու երկրների
միջև, և դա վավերացվում է մի փատաթղթով, որ հայտնի է «Դաշանց թուղթ»
անունով⁵: Սկսած այդ ժամանակներից՝ Հայաստան բերված խաչափայտի մա-
սունքները փոխանցվում են սերմնիներունդ՝ պահպանվելով բացառապես մեր
կաթողիկոսների մոտ: Սեդրեստրոսի խնդրանքով Գր. Լուսավորիչը գրում է
«ԳԿԱՆՈՆԱ զԳՈՒՀԱՌՈՐԱ» և նրանից ստանում խաչափայտի նշանը ու Ղուկաս

¹ Տե՛ս Թ. Ս. Хачатрян, Древняя культура Ширака (3-1 тыс. до н.э.), Ер., 1975, էջ 12-29:

² Տե՛ս Մ. Արեղյան, Երևի... և. Դ, Եր., 1970, էջ 17-33:

³ Տե՛ս Մատենադարանի ձեռ. 995 (1278 թ.), էջ 425 ա-453 ա (ընդարձակ տարբերա-
կը) և 4505 (15-րդ դար) (համառոտ տարբերակը):

⁴ Կոզեռնին վերագրված «Տեսիլքը», Հր. Բարթիկյանի կարծիքով, նրա կողմից չի գր-
վել: Տե՛ս Մ. Ուոհայեցի, Ժամանակագրություն, Եր., 1991, էջ 491:

⁵ Տե՛ս Կ. Մարր, Сказание о католикосе Петре и ученом Иоане Козерне, «Восточные заметки», С.-П., 1895:

⁶ Տե՛ս Մատենադարանի ձեռ. 995, որը 1278 թ. ընդօրինակվում է:

⁷ Կոստանդիանոսի մայր Հեղինեն 2-րդ անգամ գնում է Երուսաղեմ և գտնում խաչա-
փայտի մասունքները: Դա հայտնի է խաչափայտի Երկրորդ Գյուտ անվանումով (առաջինը
գտել է Պատրոնիկեն):

⁸ Տրդատ – Կոստանդիանոս դաշինքի թվականը համարվում է 321 թ., իսկ «Դաշանց
թղթի» ստեղծման ժամանակը՝ 12-13-րդ դդ., տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Բ. 1, Եր.,
1963, էջ 285:

Ավետարանչի Ջախը: Մասունքները նա բերում և պահում է Պալունյաց գավառի Կվառս գյուղում, որի վրա, նախանձից դրդված, հարձակվում է բասիլների թագավոր Գեղեճհունը: Կրկին գործ ունենք ժամանակախախտման հետ: Տրդատ - Գոթաց թագավոր մենամարտի դրվագը՝ փոխված է Վահան Մամիկոնյան - Գեղեճհուն դրվագով¹⁰ շփոթելով այն նաև Վաչե Մամիկոնյան - Սանեսան մենամարտի մեկ այլ դրվագով¹¹: Տրդատը և Գեղեճհունը մենամարտում են, ու հայոց արքան Գրիգորի աղոթքի շնորհիվ հաղթում է թշնամուն:

Սուրբ Նշանը այնուհետև Ներսես Մեծի (329-373) ձեռքում է, որով նա կործանում է չար քաղաք Արշակավանը, իսկ Ջիրավի ճակատամարտում հաղթանակ բերում մեր բանակին:

Եվ ահա Սուրբ Նշանը Պետրոս Գետադարձի մոտ է: 1021 թ. բյուզանդական Վասիլ կայսրը (976-1025) Հովհաննեսից (1020-1042) պահանջում է կա՛մ դավանափոխ լինել (դառնալ քաղկեդոնական), կա՛մ տալ Անի՛ն Ծիրակ և Տիրակ գավառներով:

Հայոց արքան կաթողիկոս Պետրոսին ուղարկում է «Առ Վասիլն և խնդրել զխաղաղութիւն և խոստանայր տալ նմա զգավառն, զոր խնդրէր յետ մահուն իւրոյ»¹²: Տեր Պետրոսը Տրապիզոն է մեկնում 300 հոգանոց մեծ ջջախմբով, շքեղ հանդերձներով և առատ նվերներով: Նրան ուղեկցում էին նաև Հովհաննես Կոզեռը և Հովսեփ Ընծայեցին: Այս ամենը թելադրված էր այն իրողությամբ, որ բյուզանդական բանակը գարնանը ասպատակելու էր հայոց երկիրը, քանզի Վրաստանը (Հովհաննեսի դաշնակիցը) արդեն պատրված էր և ծնկի էր բերված:

Բանակցությունները զուգահեյպում են Մանդյան տոմեթի հետ: Ջրօրհնքի արարողությունը (հունվարի 6-ին) կատարվում է Տրապիզոնի գետում՝ հանդիսավոր պայմաններում: Ի նշան հարգանքի, երկու եկեղեցիների մերձեցման և դաշինքի, ուր պատմիչի պատկերավոր խոսքերով ասած՝ կնքվել էր «Անիի կորստյան գիրը», Վասիլը տեր Պետրոսին է առաջարկում օրհնել Մյուռոնը և օձել ջուրը, քանզի նա ուներ «շնորհ իմն աստուածական»: Հույն մետրոպոլիտները վախեցնում են ընդդիմանալ կայսեր կամքին: Պետրոսը օրհնում է Մյուռոնը և Խաչը (որն այստեղ նույնացված է մասունքների հետ) երեք անգամ ջուրը մտցնում: Կատարվում է հրաշք: Ջրից արձակվում է բոսորագույն և ծիածանանման սաստիկ հուր: Այն պսակաձև պատում է գետի երկու ափերը և կամարի տեսք ստանում: Իսկ լույսը առատորեն բխում է Խաչից, ինչպես աղբյուրից: Հավաքված բազմությունը զարմացած ու զարհուրած ասպաշխարում է: Տեր Պետրոսը «Մեղա, Տեր» է ասում, և լույսն ամփոփվում է Խաչի մեջ, իսկ գետի ջուրը հավաքվում է «առ վայր մի» ու հայոց հայրապետի աղոթքից հետո կրկին հոսում իր հունով: Ջեռագրում ասվում է. «զջուր յորդահոս գետոյն հզարի արգելեաց յ աշխարհն Յունայ ի ձեռն Սուրբ Նշանին, յորում ժամանակի և Յովհաննես՝ որդի Գազկայ արքային, նստէր ի յԱնի քաղաք՝ ի յաթառ թագաւորութեան Հայոց» (ձեռ. 995, էջ 449 ա): Կաթողիկոսը մինչև ուշ երեկո բուժում է հիվանդներին: Այժմ էլ Վասիլը պատվիրում է մետրոպոլիտներին իրենց օրենքով շարունակել տոնը: Համաձայն ավանդույթի՝ նրանք աղավճի են թոցնում: Երկնքից հայտնվում է մի արծիվ և տանում արձակված աղավճին: Ջարհուրած և երկյուղած մարդիկ ջերմեռանդորեն երկրպագում են Սուրբ Նշանը, իսկ Վասիլ կայսրը հանում է թագը, դնում գետնին և խնդրում տեր Պետրոսին օձել իր գլուխը ջրով: Նա ոչ միայն երկրպագում է հրաշագործ Խաչը, այլև հետագայում (ըստ պարականոնի) այցելում Աև լեռան Պաղակձիակ

⁹ Տե՛ս Ագաթանգեղոս. Պատմություն հայոց, Եր., 1977, էջ 39:

¹⁰ Տե՛ս «Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուրք», Տփղիս, 1907, էջ 334:

¹¹ Տե՛ս Փափստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Եր., 1987, էջ 30, 31:

¹² Տե՛ս Մ. Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 490-491, ծանոթ 90:

վանքը, որով հաստատում է իր՝ ծածուկ լուսավորչական դառնալը: Այսպես է տեր Պետրոսի մասին հիշումովում գետարգելության գրույցը, և հետագայում նրան տրրվում է Գետարգել մականունը:

Հովհաննես արքան Անիի կորուստ-կտակը Պետրոսի վրա բարդելու ակնհայտ մտադրությամբ և թերևս պատժելու համար նրա անհնազանդ պահվածքը 1038 թ. խաբեությամբ Անի է հրավիրում Ջորո վանքում հաստատված կաթողիկոսին, ձերբակալում և պատվավոր կալանքի տակ պահում Բջնու ամրոցում (մոտ մեկ ու կես տարի): Այստեղ էլ կայանում է տեր Պետրոսի և միջնադարի մեծ իմաստասեր և պետական գործիչ Գրիգոր Մագիստրոսի բարեկամությունը¹¹: Երբ 1042 թ. մեռնում է արքան, և բյուզանդական տերությունը փորձում է ուժով գրավել քաղաքը, տեր Պետրոսը միավորվում է Մահլափունիների (Վահրամի և Գրիգորի) հետ և թագավոր օծում 18-ամյա Գագիկ II-ին (1042-1045): Բայց Գագիկի՝ Բյուզանդիա մեկնելուց հետո Անիի բանալիները նա հանձնում է դավաճան Վեստ Սարգսի ստորաճրով: 1047 թ. կաթողիկոսը ևս կանչվում է Կոստանդնուպոլիս, այնտեղ մնում պատվավոր կալանքի տակ 4 տարի և 1051 թ. Ատոմ Արծրունու և այլ հայ իշխանների ազդու միջամտությամբ տեղափոխվում է Սեբաստիա (նրան թույլ չի տրվում կայսրության սահմաններից դուրս գալ): Պետրոսի մահից հետո՝ 1058 թ. կաթողիկոս է ձեռնադրվում Խաչիկ Բ Անեցին (1058-1065), որը ևս եմթարկվում է իր նախորդի ճակատագրին:

Սուրբ Նշանը պահվում է Խավարածրի վանքում: Վանահայր Ատոմը այն բերում է Հոռոմոսի վանք և մասունքների հրաշագործությամբ փոխում է Ախուրյանի հունը: Ս. Նշանը վերադարձնում է Խորածոր և մեռնում: Ջեռագիր 4505-ի համաձայն՝ մասունքները բերվում են Կոտայք գավառի Ջագավանք: Այս փաստը հաստատվում է նաև պատմական տվյալներով: Գ. Հովսեփյանի կարծիքով, Ջագավանքին Սուրբ Նշանը հանձնել է Գրիգոր Ժ Ջալալբեգյանը (1443-1465), որն իր թողած արձանագրության մեջ նշում է. «Ծնորհեցաք զՋագ ընծայ՝ Գետադարձ Սուրբ Նշանիս»¹²: Հաճախ լինում էին դեպքեր, երբ մեծազդեցիկ իշխանները ցանկանում էին ունենալ սուրբ մասունքներ:

«Գետարգել Սուրբ Նշանի պատմություն» երկն իր յուրատեսակ շարունակությունն է ունենում 18-րդ դարում: «Աղվան և Օսան» սիրավեպի մեջ կաթողիկոս Աբրահամ Կրետացին (1734-1737) գործում է նոր հրաշք¹³: Նադիր Շահը (1736-1747) պահանջում է, որ նա իր 12 եպիսկոպոսներով գա Սպահան և Գայլագետում ամուսնացնի Աղվանին, որն ապօրինի ձևով ուզում է ամուսնանալ մահմեդական Օսանի հետ: «Դուք՝ հպարտ հայերդ, շատ սնոտի բաներով սիրաշահում, որսում եք մարդկանց, ասում եք, - ամբաստանում է նա, - թե Քրիստոսը ահագին Հորդանան գետը կանգնեցրեց և դարձյալ, թե Պետրոս կաթողիկոսը նույնպես գետը հետ դարձրեց»¹⁴: Շահը պահանջում է, որ գարնանային վարար գետի (Գայլագետ)՝ ավազանում կատարվի Աղվանի և Օսանի պսակադրությունը: Գետի ափ է գալիս կաթողիկոսը՝ 12 եպիսկոպոսներով, գալիս է և շահը՝ իր նախարարներով ու հոգևորականներով: Կաթողիկոսը վերցնում է Սուրբ Աշանը և պահում գետի վրա: Ջրառատ Գայլագետը ցամաքում է, և եպիսկոպոսները կատարում են պսակադրությունը: Կրկին գետի վրա լուսե պսակ է կախվում, իսկ հաղորդության գինին երիտասարդ զույգի բերանում լույսի ցուլք

¹¹ Տե՛ս Կ. Կոստանյանց, Տեր Պետրոս Ա Գետադարձ, Վաղարշապատ, 1897, էջ 16: Ս. Մխիթարյան, Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, Եր., 2001, էջ 11-21:

¹² Գարեգին Հովսեփյան, Ջագավանից ժողովը, «Օռդակաթ», 1913:

¹³ Տե՛ս Աշուղ Ղարիբ, Բյուր-Օղլի... (կազմող՝ Ղ. Սողոմոնյան), հ. 1, Եր., 1990, էջ 308:

¹⁴ Նույն տեղում:

է առաջացնում: Հավաքված պարսիկները զարմանում են, և նրանցից հազարը հետևում են Օսանի հայր Սատիսբեկի օրինակին և մկրտվում: Նադիր շահը ներում է խնդրում կաթողիկոսից և ի նշան հարգանքի՝ թանկարժեք նվերներ հանձնում նրան, իսկ էջմիածնի վանքին վերադարձնում իլված կալվածքները¹⁷: Իսկ Սուրբ Նշանը վերադարձվում է թերևս Ջազավանք, քանզի դա էր նրա հանգրվանելու վայրը (այս մասին տեղեկություններ չեն տրվում):

Ինչ վերաբերում է գետադարձության հրաշքին, պետք է ասել, որ 11-րդ դարի հեղինակների Պետրոս կաթողիկոսին անվանում են տեր Պետրոս, իսկ Գետադարձ կամ Ջրադարձ մականունները չեն գործածում¹⁸: Պարականոնը ստեղծվում է 12-րդ դարի 1-ին կեսին՝ Առաջին և Երկրորդ խաչակրաց արշավանքների միջև ընկած ժամանակահատվածում¹⁹: Իսկ թե դա ի՞նչ ճանապարհով կարող էր առաջանալ, պարզաբանվում է հետևյալ հանգամանքով: Իր «Յադագս Խաչանշան գավազանին...» ընծայական-գովաբանական բանաստեղծության հետ Գրիգոր Մագիստրոսը տեր Պետրոսին է ուղարկում խաչանշան գավազան, մի բաժակ և մի անոթ՝ փողոյն սրբութեան»²⁰: Համեմատելով նրան Մովսեսի հետ՝ բանաստեղծը գրում է.

Նահանջօղ գետոց յարին անդրանկածախ մեռելութեան,
Խափանիչդ վիշապաց կիսոյ հմայից կախարդութեան,
Պատառիչ ջուրցն մածեալ դիզան ալեացն թանձրութեան:
...Ոչ սա ոստ դոմպիական, այլ փոխադրօղ ջրոյն դառնութեան.
Ոչ այս տունկ է ձիթենոյ, այլ հովուական ձեզ պետութեան²¹:

Բանաստեղծության մեջ այլաբանորեն է խոսվում Մովսեսի՝ գավազանի օգնությամբ ծովի ջրերն արգելելու մասին (զուգադրելով երկու՝ Մովսեսի և իր՝ Պետրոսին ուղարկած գավազանները՝ որպես նշանակ աստվածային իշխանության): Բայց հետագայում այն ավելի շատ ուղղակիորեն է ընկալվել և ի վերջո զուգադրվել ջրի պաշտամունքի հետ կապված գրույցների հետ: Դրանում իր կարևոր դերն է ունեցել Ջրօրհների տոնին տեր Պետրոսի մասնակցությունը, արարողությունը իր ձեռքով կատարելը (1022 թ.): Հավանաբար պարականոնը Մ. Ուոհայեցուն է հասել Հակոբ Սանահնեցու Պատմությունից, որից օգտվել է նա (Հակոբի աշխատությունը մեզ չի հասել): Ի հարկե այդ ամենը արդյունք էր միջեկեղեցական և քաղաքական այն թեժ հակամարտության, որ ծավալվեց հատկապես Կոստանդին Դուկաս (1059-1067) կայսեր օրոք:

Պարականոնն ստեղծվել է Արգինայի վարդապետարանում (կաթողիկոսական նրստավայր (1001-1047) և շրջակա վանքերում, քանզի գործողությունների մի մասը հենց այստեղ էր կատարվում (տեր Ատոմը փոխում է Ախուրյանի հունը և այլն): Բացի դրանից, հենց այստեղ էր, որ կրոնավորությունը և հայ վերնախավը հակաբյուզանդական տրամադրություններ ունեւր:

Վ. Բդոյանը մեզ անում ջրապաշտության երկու շրջան է առանձնացնում՝ նախաքրիստոնեական և քրիստոնեական: Մինչքրիստոնեական շրջանում

¹⁷ Նադիր շահը 1735 թ. Եղվարդի՝ թուրքերի դեմ տարած հաղթական ճակատամարտից հետո բարենորոգչական մեծ աշխատանքներ է կատարում Արևելյան Հայաստանում՝ ստեղծելով Խամսայի (5) մելիքությունները և էջմիածնի վանքն ազատելով հարկերից: Տե՛ս Ստ. Մելիք-Բախշյան, Հայոց պատմություն, Եր., 1993, էջ 197-201:

¹⁸ Տե՛ս «Գրիգոր Մագիստրոսի Թղթերը», Ալեքսանդրապոլ, 1910, էջ 3-36: Այսուհետև՝ Թղթեր: Դրանց վերնագրերում միայն «տեր Պետրոս» ձևն է հաճախում:

¹⁹ Տե՛ս Կ. Մարր, «Сказание о...», էջ 33:

²⁰ Տե՛ս Թղթեր, էջ 287:

²¹ Տե՛ս նույն տեղը, էջ 32:

կրակը և ջուրը քույր ու եղբայր էին համարվում²²: Այս հակադիր տարերքների համատեղ հանդես գալը բնորոշ է ոչ միայն ուրիշ լեգենդների, այլև մեր «Գետարգել Սուրբ Նշանի պատմություն» պարականոնին: Նկատենք, որ նրանում միանգամից դրսևորվել են ծիսապաշտամունքային մի քանի իրողություններ: Ջրի և կրակի պաշտամունքը իբրև այդպիսին չի գիտակցվում: Մյուս կողմից՝ մեզանում նաև գետի պաշտամունք է եղել (թեև այն ևս առաջին հայացքից չի գիտակցվում): Ինչպես ջուրը և նրա ակունք - աղբյուրն է սուրբ²³, այնպես էլ սուրբ է գետը՝ որպես կենսաբեր ջրի սկիզբ²⁴: Մեր էպոսի հերոսները (Սանասարը և Բաղդասարը) ոչ միայն ջրածին են, այլ գետի ու աղբյուրի ակունքի վրա են կառուցում իրենց բերդը՝ հետևելով հնագույն հայկական արքեոսիային: Հիշենք նաև, որ կենտրոնական գետերը (Եգիպտոսում՝ Նեղոսը, Հնդկաստանում՝ Գանգեսը, մեզանում՝ Արաքսը) համարվում էին մայր գետեր, ինչը նշանակում էր նրանց սուրբ լինելը: Գետարգելության հրաշքը խորը միֆական ենթատեքստ ունի իր մեջ և ներկայացնում է արքեոսիայերի մի ամբողջ համակարգ: Հարց է ծագում՝ պարականոնում ինչո՞ւ է Ռաստակեսը (Արիստակես) արորով ծովը վարում և հույն մետրոպոլիտներից պարտադրում այն ցանել: Արդյո՞ք միայն այն քանի համար, որ սուրբ է և Նիկիայի ժողովի մասնակիցներին պետք է ցույց տա իր սուրբ լինելը (ջրի վրա քայլելը, թեև դա ևս հնագույն պատկերացում է), թե՞ դրանում կա նաև երաշտի ժամանակ գետը կամ ցամաքած ջրավազանի հունը վարելու հնագույն սովորությունը²⁵:

Իսկ գետը կանգնեցնելու ժամանակ (բանահյուսական տարբերակում խոսվում է նաև հետ հոսեցնելու հրաշքի մասին) ինչո՞ւ է արձակվում աղավնին. միայն այն նպատակով, որ այն սուրբ հոգու խորհրդանիշն է, թե՞ դրանում կա նաև հնագույն պատկերացումը: Աղավնին Արևելքի սիրո և ջրի՝ Դերկետո - Ատարգատիս - Աստղիկ աստվածուհիների սիմվոլն է: Չե՞նք ունեցել արդյոք գետի մեջ պսակադրություն կատարելու հնագույն սովորություն, հատկապես եթե դա վերաբերեր հայ պատանու և օտարագզի աղջկա ամուսնությանը կամ ընդհանրապես ամուսնությանը, երբ անհրաժեշտ կլիներ մաքրման (լվացման) և օծման արարողություններ կատարել, մանավանդ որ գետի ջրում դա պիտի խորհրդանշեր բերքատվություն, առատություն, իսկ ամուլ կամանց դեպքում՝ երեխա ունենալու, պտղավորվելու սովորություն-ծես:

Նանե աստվածուհու մասին, որ հայոց դիցարանի Անահիտ աստվածուհու բուն հայկական կրկնակն է, Ագաթանգեղոսը գրում է, թե նրա մեհյանը կործանողները «Այնտեղից Գայլ գետի վրայով այն կողմ անցան և քանդեցին Արամագրի դստեր՝ Նանեի մեհյանը Թիլ ավանում»²⁶:

Պարզ երևում է, որ Գայլ անունը մի ուրիշ տեղից է թափանցել սիրավեպի, իսկ այնտեղից էլ՝ պարականոնի մեջ՝ Գայլագետ անունով: Անահիտի տոներից մեկը կատարվում էր գարնանո՝ և հնարավոր է, որ այդ ժամանակ էին ամուսնացնում շատ երիտասարդներ: Վերջապես, 12 եպիսկոպոսների առկայությունը պատահական չէ: Կ. Յունգը այդ թվի խորհրդանշական իմաստը բացատրելիս նշում է, որ այդ միֆը նշանակում է ժամանակը և այն քաջագործությունները (Հերակլեսի), որով անհատն ազատվում է անգիտակցականից (քառայինից)²⁷, և կյանքը կարգաբանվում է:

²² Տե՛ս Վ. Բոդյան, Հայ ազգագրություն, Եր., 1973, էջ 201:

²³ Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. է. Եր., 1975, էջ 163-165:

²⁴ Մինչև 20-րդ դ. մեզանում տարածված է եղել երաշտի ժամանակ գետի հունը արորով վարելու հնագույն սովորությունը:

²⁵ Տե՛ս Խաչիկ Սամվելյան, Հին Հայաստանի կոլտուրան, հ. 1, Եր., 1931, էջ 291-294:

²⁶ Ագաթանգեղոս, Պատմություն հայոց, էջ 123:

²⁷ Տե՛ս Կարլ Գուստավ Եյոնգ, Դուա և միֆ, Մ., 1997, էջ 323:

Վերջում գտնվում էր «Գետարգել Սուրբ Նշանի պատմությունը» կարևոր է ժամանակաշրջանի բազմաթիվ գեղագիտական-տեսական խնդիրների լուծման և հայ կյանքի վայրիվերումները ճիշտ պատկերացնելու համար:

С. М. МХИТАРЯН - Апокриф «История святого Гетаргеля». - Представляемый апокриф является фольклорным памятником средневековья, записанным в XII веке. В нем повествуется о том, как в 1022 году католикос Петрос совершил чудодействие, повернув вспять реку, за что и получил прозвание «Гетадарц». Обломки креста, с помощью которых совершено было чудо, впоследствии хранились в церкви Дзагаванк, получившей второе название «Гетаргел» - преграждающий реку.